

Դավիթ Գյուրջինյան

Մայրենի 6

Աշխատանքային տետր 2



Երևան 2013

1. ա) Բանաստեղծության մեջ լրացրո՛ւ պակասող տառա-
նունները:

Այբ, բեն,, դա.

Արարարի լանջի վրա

Մեր քոչարին դեռ կթնդա:

Եջ, գա, է, ըթ.

Սասնա՛ Դավիթ,

Տո՛ւր ինչ թուրդ:



մեն

Թո, ժե,, լյուն.

Մաշտոցն է հավերժի սյուն:

Խե, ծա,, հո.

Մեծ Տիգրանն է սարդ լուսո:



կեն

Չա, դար, նե,,

Ավարայրի դաշտը գիտեմ:

Հի,, շա, ո.

Անդրանիկներ ունենք հզոր:



պե

Չա,, ջե, ռա.

Նահապետի նետը նորից կհուրհրա:

Մե, վեվ,, թե.

Մեծ եղեռնի վրեժ ունեմ:

նու

Յո, վյուն, փյուր,

Մեծ ու փոքրին մի տեղ ժողվե:

տյուն


Եվ, օ, ֆե.

Տուն կմտնենք հաղթանակով...

Հայկ Հրայր

բ) Գրածդ յուրաքանչյուր տառով սկսվող երկուական բան գրիր: Բացատրի՛ր դրանց կազմությունը:

գ) Գրածդ բառերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

 2. Ո՞րն է հայոց մեծերի ծննդավայրը. ներկի՛ր ճիշտ պատասխանի շրջանակը:



- Օշական
- Հացեկաց
- Վան
- Նախիջևան

- ՕՎաղարշապատ
- ՕՇուշի
- ՕԴսեղ
- ՕԹիֆլիս

3. Գիշտ է արդյոք հետևյալ միտքը: Համապատասխան շրջանակը ներկիր:

Մեսրոպ Մաշտոցին անվանում են հայերենի առաջին ուսուցիչ:


- այո ոչ

4. Պատկերավոր ձևով ինչպե՞ս են անվանում Հովհաննես Թումանյանին: Գիշտ պատասխանի շրջանակը ներկիր:


- ազապրության երգիչ.
 ամենայն հայոց բանաստեղծ

5. ա) Նույն գույնի բաժակների և ափսեների վրա գրված արձատներն ա հոդակապով իրա՛ր միացրու և բառե՛ր կազմիր:

Հուշում. Բաժակների վրա գրվածները բառի սկզբում են դրվում:



բ) Գրածդ բառերից երկուսը գործածիր նախադասու-
թյունների մեջ:


 **6.ա)** Բառեր կազմիր և լրացրո՛ւ խաչբառը:

Հորիզոնական (ձախից աջ)

Ուղղահայաց (վերից վար)

1. գեղեցիկ + ություն
2. փուն + ային
3. գույն + ավոր
4. բուն + իկ
5. բույս + սկսան


1. հուր + եղեն
2. շուք + եղ
3. թուփ + ուր
4. նուռ + ենի
5. որդի + սկ
6. գիր + իչ



բ) Խաչքառի բառերից ընտրելով՝ լրացրո՛ւ աղյուսակը:

առարկա ցույց փվող բառեր (գոյականներ)	հարկանիշ ցույց փվող բառեր (ածականներ)

գ) Յուրաքանչյուր սյունակից երկուական բա՛ռ ընտրիր և գործածի՛ր նախադասությունների մեջ:

 7. Ըստ գույների իրա՛ր միացրու համապատասխան արմատն ու ածանցը և ա հոդակապի օգնությամբ բառե՛ր կազմիր:

- | | | |
|-------|--------|-------|
| այգի | -գին | _____ |
| դուռ | -սրան | _____ |
| հեքու | -սեւ | _____ |
| մեծ | -գույն | _____ |
| նոր | -բար | _____ |
| սիրտ | -պան | _____ |

8. Պատասխանիր հետևյալ հարցերին: Ընտրածդ պատասխանի շրջանակը ներկիր:

ա) Գանակ բառի ալ-ը վերջածանց է:

այո

ոչ

բ) Ահեղ բառի եղ-ը վերջածանց է:

այո

ոչ

գ) Ապակի բառի ապ-ը նախածանց է:

այո

ոչ

դ) Տգեղ բառի տ-ն նախածանց է:

այո

ոչ

9. *ա)* Գիրիր հետևյալ բառերի հականիշները և վերից վար լրացրո՛ւ վանդակներում: Հաշվի՛ առ, որ **ան-** նախածանցն արդեն ունես:

1. թևավոր

2. համեղ

3. խելացի

4. ծանոթ

5. ուշադիր

6. հրապուրիչ

7. կարգապահ

8. բարեկամար


9. վարահուժյուն

10. կանխարեւելի

11. տրամաբանական

ան										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

բ) Հորիզոնական տողերում «թաքնված» որևէ բառ կա՞: Գիրիր այս տողի վրա:


 **10.** ա) Մատիստով ընդգծի՛ր այն բառերը, որտեղ ա հոդակապը բառավերջի ի ձայնավորի հետ դարձել է ե:

Գինեպուն, ծաղկեպունջ, դափնեվարդ, ոսկեվազ, բազմերանգ, խմբերգ, ազեվազ, դեղձենի, ամենօրյա, այգեգործ, սարեսար, փարեվերջ, բարեգործ, ուղեվճար, քրիստոնեական:

բ) Ընդգծածդ բառերից ընտրի՛ր երեք այնպիսի բառ, որոնց առաջին բաղադրիչներով կարող ես 1-2 ուրիշ բառ կազմել:

Նմուշ՝ հոգեբան – հոգեպարար:

գ) Բառերից երեքը գործածի՛ր նախադասությունների մեջ:


 **11.** ա) Տրված նախածանցներով և արմատներով 5 բա՛ռ կազմի՛ր:

<i>ան-</i>	<i>ապահով</i>	_____
<i>բաց-</i>	<i>հայր</i>	_____
<i>գեր-</i>	<i>սարդ</i>	_____
<i>համ-</i>	<i>զգեսք</i>	_____
<i>փրամ-</i>	<i>գիծ</i>	_____

բ) Ո՞ր բառերում ածանցի և արմատի միջև ա դրեցիր: Դրանց դիմաց + նշանը դիր:

12. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր համապատասխան համարաթիվը:

Ննջատենյակ



- | | | |
|---|-----------------------------------|--|
| <input type="checkbox"/> բարձ | <input type="checkbox"/> ծածկոց | <input type="checkbox"/> պահարան
(զգեսրասպահարան) |
| <input type="checkbox"/> բարձի երես
(բարձերես) | <input type="checkbox"/> հայելի | <input type="checkbox"/> պահարանիկ |
| <input type="checkbox"/> գորգ | <input type="checkbox"/> մահճակալ | <input type="checkbox"/> սալան |
| <input type="checkbox"/> զարթուցիչ | <input type="checkbox"/> որմնաջահ | <input type="checkbox"/> վերմակ |
| <input type="checkbox"/> լուսամտուի | <input type="checkbox"/> ներքնակ | <input type="checkbox"/> վերմակասալան |


13. ա) Արմատներով և վերջածանցներով 5 բա՛ռ կազմիր:

- արշակ - ուրդ _____
- գիծ - սվոր _____
- ծանր - ոց _____
- մայր - ենի _____
- ուծ - եղ _____

բ) Արմատներից մեկով ուրի՛շ բառեր կազմիր:

գ) Ածանցներից մեկով ուրի՛շ բառեր կազմիր:

14. Յուրաքանչյուր կապակցության դիմաց գրի՛ր համապատասխան ածանցավոր բառը: Ածանցն ընտրի՛ր արկղիկից:



գյուղում սպրոդ մարդ

գիրք, որտեղ բառերը դասավորված են այբբենական կարգով

գնում կարասրոդ մարդ

եղբոր պես

խնայողների այգի _____

կին բանաստեղծ _____

մահից պարաստեղծ տեսակ-տեսակ ուրելիք _____

նյութական միջոցներով _____

նորք չկով _____

սերմի համար պահված _____



15. ա) Միացրո՛ւ տրված բաղադրիչները և բառե՛ր կազմիր:


Ուշադրություն. առաջին բաղադրիչին բոլոր դեպքերում և է ավելանում:

Ուղղահայաց (վերից վար)

1. կաթ+ հունց
2. գագաթ+ կեպ
3. բեր+ փար
4. դուռ+ փան

Հորիզոնական (ձախից աջ)

1. գառ+ արած
2. լեռ+ աշխարհ
3. թռռ+ իկ
4. հարս+ ացու
5. շուկ+ սպուր
6. նուռ+ քար



բ) Կազմածդ բառերից ընտրելով՝ լրացրո՛ւ աղյուսակը:

Ստանդարտ բառեր	Բարդ բառեր

16. Տեքստից դուրս գրիր՝

ա) պարզ բառեր

բ) անանգամայն բառեր

գ) բարդ բառեր

Անբառի թափուրում որսորդը մի բրդուր
արջ տեսավ: Բոթոթները գնում էին մոր
հետևից: Մարդը թաքնվեց թփուտներում:
Կենդանին մերթնդներ մոթմոթում էր,
սաստում ժիր շագերին: Բոթոթներից
փոքրիկը քաշքշում էր եղբայրներիև,
թափալվում կանաչ, փարթամ խոտերին:
Մեկ էլ կանգնեց փրած կոճղի վրա ու
թաթը մտցրեց ծառի փշակը: Վրդովված
մեղուները մի ակնթարթում դուրս թռան
ու խայթեցին անզգույշ քոթոթին:



Արջուկը ցավից սկսեց ցատկոտել ու անդադար ուղևալ: Մայրը
շագուկին արագորեն քարշ տվեց դեպի հորդատար գետակը:
Մարդ ջրից ցավը, մեղմացավ, և քոթոթը խաղաղվեց: Հաջորդ
պահին մայրը երկու շառաչուն սափակ հասցրեց նրան: Հետո
կանգնեցրեց ծառի տակ:

Պարզվում է, որ արջն էլ մարդու նման պատժում է անկարգ
շագին:

17. ա) Ընդգծի՛ր նախածանցները:

Ենթավերնագիր, մակագրություն, գերբնական, արտահագուար, հակաբնական, տիանություն, համակարծիք, ներքաղաքային, համահայկական, փոխօգնություն, անասինան:

բ) Ընտրի՛ր բառերից երկուսը և գործածի՛ր նախադասությունների մեջ:

18. Ընդգծի՛ր այն բառերը, որոնցում և՛ նախածանց, և՛ վերջածանց կա: Այդ բառերի նախածանցներն ու վերջածանցները ընդգծի՛ր երկու գծով :

Փոխադիջում, ստորգետնյա, լեռնի, մակերեսային, համեղ, նախապատերազմական, անասնչ, քաջաբար, ենթադրություն, խիզախորեն, հրեղեն, զարնանային, դժկամորեն, դժգոհություն, հեռավորություն, չխոսկան, տգիտություն, համաքաղաքացի:

19. Տրված բառերից նախածանցավոր և վերջածանցավոր մեկական բա՛ռ կազմի՛ր:

<i>արմատ</i>	<i>նախածանցավոր</i>	<i>վերջածանցավոր</i>
<i>բախար</i>		
<i>գույն</i>		
<i>փայլ</i>		
<i>արշակ</i>		
<i>հոտ</i>		
<i>տուն</i>		

20. Բառակապակցություններից կազմի՛ր բարդ բառեր:

ազատություն *տեղեկացող*
բարձր *հասակ ունեցող*
նորը *համ ունեցող*
շքեղ *կազմով*
նսկով *զարդարված*
սառույցով *պարված*
արտից *բխող*
քիչ *խոսող*

21. ա) Կարդա՛ և որոշի՛ր, թե ի՛նչ խոսք է գործածված: Ծիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

Չմայլվում եմ հիասքանչ տեսարանով: Դիմացս երկնահույս լեռներն եմ, որոնց կարարները ծածկված են արծաթագօծ ձյան շերտով: Ծուրջս կանաչ մարգագետինն է, որ մեղմօրոր նազում է երիկերանգ ու նրբորեն բուրրոջ ծաղիկներով: Չեփյուռը համբուրում է նրանց աշիկներն ու արքեևում անուշ բույրով: Քիչ այն կողմ մի գուլալ աղբյուր է ժայթքում երկրի խորքերից: Ծամփորդների համար այն կարծես բնության կողմից շնորհված պարգև լինի:



Արևածագին գիշերվա նիրհից զարթնել է ամեն ինչ, իսկ վաղորդյան արեգակի շողերը ջերմացնում են շրջապատը:

գեղարվեստական

գիտական

բ) Տեքստից մի քանի բա՛ռ դուրս գրի՛ր, որոնք հիմնավորում են քո որոշումը:

22. ա) Կարդա՛ և որոշի՛ր, թե ի՞նչ խոսք է գործածված:
Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

Այգիներում գարնանն անմիջապես աչքի են գարնուն դեղձենու վարդագույն, նրբագեղ ծաղիկները:



Ընդունված է ասել, որ դեղձենին չինական ծագում ունի: Այնուհետև այն իբր բերվել է Մերձավոր Արևելք, նաև Պարսկաստան: Այդտեղից էլ փարվել է Եվրոպա: Եվրոպացիներին շատ դուր եկավ պարսկական քաղցրահամ սալորը, որն արագորեն փարածվեց Միջերկրական ծովի ափամերձ փարածքներում: Երբ պարզ դարձավ, որ դեղձենին պարսկական բույս չէ, նրա «պերսիկա» գիտական անվանումը փոխելն արդեն անհնար էր:

Հայաստանում կարարված հնագիտական պեղումներից պարզվել է, որ դեղձենին մեր երկրում փարածված է եղել վաղնջական ժամանակներում: Կարելի է ասել, որ Հայաստանը դեղձենու մշակութային հնագույն և ինքնուրույն բնօրրաններից մեկն է:

գեղարվեստական

գիտական

բ) Տեքստից մի քանի բա՛ռ դուրս գրի՛ր, որոնք հիմնավորում են քո որոշումը:

23. Ի՞նչ է Կարմիր գիրքը:

մանկական հանրագիտարան

ռեկորդների գիրք

հազվագյուտ և անհետացման վտանգի տակ գրնվող բույսերի և կենդանիների հաշվառման գիրք

աշխարհի ամենադաժան օրենքների ժողովածու

24. Սլաքներով իրա՛ր միացրու բառերը և նրանց իմաստները:

ափսաս	գեղի սկիզբը
սկունք	լեռան ամենաբարձր մասը
գեղաբերան	փարթեր քարտեղներից կազմված գիրք, քարտեղագիրք
գագաթ	գեղի՝ ծովը թափվելու տեղը
օազիս	երկու հարևան գեղային ավազանները միմյանցից բաժանող գիծը
ջրաբաժան	կանաչ փարածուծունև անապատում

25. Տեքստի պարբերությունները խառնված են: Վերականգնի՛ր խախտված տրամաբանությունը, համարաթվերը ճիշտ հերթականությամբ լրացրո՛ւ շրջանակներում:

Այդ առթիվ պատմահայր Մովսես Խորենացին գրում է, որ Արամայիսն իր բնակության համար տուն է շինում գեղի ափին և իր անունով կոչում Արմավիր, իսկ գեղի անունը իր թոռան՝ Երասրի անունով դնում է Երասի:

Արաքս գեղը հայերի համար եղել է սնող, կյանք պարգևող սիրելի գեղ և կոչվել մայր Արաքս:


Ըստ ավանդության՝ Արաքսի (Երասի) անունը կապվում է հայերիս անվանադիր նախնու՝ Հայկի ժառանգներից մեկի՝ Արամայիսի թոռան հետ:

Գեղը սկիզբ է առնում Բյուրակն բարձրավանդակի սառնորակ աղբյուրներից և միանալով Սրմակց գեղին՝ հոսում է դեպի հյուսիս-արևելք, ապա դուրս է գալիս Բասենի դաշտ:

Պարբերությունների ճիշտ դասավորությունն է՝ _____

26. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր համապատասխան համարաթիվը:

Մարդու մարմինը



- | | | |
|----------------------------------|--------------------------------------|---------------------------------------|
| <input type="checkbox"/> ազդր | <input type="checkbox"/> կրունկ | <input type="checkbox"/> վիզ, պարանոց |
| <input type="checkbox"/> ափ | <input type="checkbox"/> կուրծք | <input type="checkbox"/> փոր, որովայն |
| <input type="checkbox"/> բռունցք | <input type="checkbox"/> շեղք | <input type="checkbox"/> բութ, բթամար |
| <input type="checkbox"/> գլուխ | <input type="checkbox"/> մար | <input type="checkbox"/> նկույթ |
| <input type="checkbox"/> դասարակ | <input type="checkbox"/> մեջք | <input type="checkbox"/> ցուցամար |
| <input type="checkbox"/> ծոծրակ | <input type="checkbox"/> ոտք | <input type="checkbox"/> մարնեմար |
| <input type="checkbox"/> ծունկ | <input type="checkbox"/> ոտքի մարմեր | <input type="checkbox"/> միջնամար |
| <input type="checkbox"/> կոկորդ | <input type="checkbox"/> ներքան | |

27. ա) Նմուշի նման նույն գույնով ներկի՛ր արտահայտությունները և աշխարհագրական անունները:

Քեղամա լեռների տիրուհի

Սևանա լիճ

Քանդաքանի բաց երկնքի տակ

Արարս

Ս. Էջմիածին

Կամուրջներ շիակոտորժող գետ

Քաղաքապետի տուն

ամենայն հայոց մայրաքաղաք

Երևան

հազար ու մի եկեղեցիների քաղաք

Անի

հայոց հավայրի մայրաքաղաք

Հայաստան

Արարատ

Սրագլուխ


աստվածաշնչյան լեռ

բ) Սրանցից մեկի մասին տեղեկություններ հավաքիր և գրի՛ր:

գ) Ի՞նչ տեսակի տեքստ է քո գրածը:

28. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր համապատասխան համարաթիվը:

Տան ընդհանուր տեսքը



առանձնատուն փուն

պատ

ատրիում

պարզգամք

դուռ

փան համարը

լուսամուտ/պատուհան

փանիք

հարկ

29. Տրված արմատներին ժխտական նախածանցներ ավելացրու:

բ ա խ փ, հ ա դ ք, հ ա ն, գ ո հ,
 ե ռ ջ ա ն ի կ, կ ա թ, ջ ա յ ն, ե ռ ա խ փ,
 փ ե ս:


30. Տրված նախածանցներով բառեր կազմիր և լրացրո՛ւ հետևյալ աղյուսակը:

համա-	ենթ-	ստոր-

31. Տրված բառերին համապատասխան նախածանցներ ավելացրու:

գիծ, նախազահ, տեսանելի,
 սպա, զգեստ, կարծիք:

32. I. Տրված անցներով կազմիր նույնարմատ հականիշներ: Նայի՛ր պարկի մեջ:



- ա) արդա- _____
- ներ- _____
- բ) համա- _____
- հակա- _____
- գ) ներ- _____
- բաց- _____
- դ) գեր- _____
- թեր- _____
- ե) ստոր- _____
- վեր- _____

II. Հականիշների մեկ զո՛ւյգ ընտրիր և գործածի՛ր միևնույն նախադասության մեջ:

33. Բառակապակցությունների իմաստն արտահայտի՛ր նախածանցավոր բառերով: Օգտագործելու ես արկղիկի միջի նախածանցները, սակայն դրանցից մեկն ավելորդ է:



- ա) կարգուկանոնին դեմ _____
- բ) ամբողջ քաղաքն ընդգրկող _____
- գ) մարդու ներքին՝ հոգեկան աշխարհը _____
- դ) մինչև հաջորդ հանդիպումը՝ տեսնելը _____
- ե) նշանակված ժամից դուրս _____


34. ա) Բառե՛ր կազմիր:

- արծաթ + պար _____
- նսկի + հյուս _____
- դեմք + նկար _____
- փրփուր + բաշ _____
- երկինք + կամար _____
- հրաշք + գործ _____
- խնդիր + գիր _____

բ) Կազմածդ բառերից երկուսը գործածի՛ր նախադասու-
թյունների մեջ:

37. Արմատներով և երկրորդ շարքից ընտրված անանցներով 5 բա՛ռ կազմիր և լրացրո՛ւ խաչքառը:

- 1. ոռւս - ենի
- 2. այգի - իկ
- 3. թեյ - սկան
- 4. թուփ - պան
- 5. հեքիաթ - ություն
- 6. որս - ային
- 7. սեղան - արան
- 8. մաքուր - որդ




38. ա) Ընդգծիր այն բառերը, որոնցում **-ակ, -իկ, -ուկ** վերջածանցները փաղաքշական կամ փոքրացուցիչ իմաստ են արտահայտում:

Մայրիկ, լնակ, սպեյուկ, արջուկ, թելուկ, փայտիկ, սիրունիկ, բռնակ, աթոռակ, արդուկ, ծովակ, հարթակ, բանուկ, Ջերմուկ, աղջնակ, փայտիկ, գառնուկ, մանկիկ, քույրիկ, կամրջակ:

բ) Լրացրո՛ւ աղյուսակը:

փաղաքշական իմաստ է արտահայտում	նվազական իմաստ է արտահայտում
մայրիկ	փայտիկ

գ) Փոքրիկ պատմությունն հորինիր՝ օգտագործելով վերևում տրված բառերից 4-5-ը:


 **39.** ա) Գործողությունն ցույց տվող այս բառերի (բայերի) արմատներից -արան ածանցով գոյականներ կազմիր:

Բնակվել, ննջել, սրնել, լսել, ընթերցել, բուժել, գործել, շուկել, դասել, ճաշել:

բ) Կազմածդ բառերից երկուսը գործածիր նախադասությունների մեջ:

40. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր համապատասխան համարաթիվը:

Աստիճանահարթակ



աղբարար

աստիճան

բազրիք

բնակարանի համար

բռնակ

գորգիկ

դուռ

զանգ

(էլեկտրական) հաշվիչ

կողպեք

հարթակ

վերելակ

վերելակի կոճակ

41. ա) Տրված ածանցների համապատասխան նշանակությամբ երեքական բա՛ռ գրիր:

-ակ (նվազակասն-փառաբշակասն նշանակությամբ)

-ավետ (նի բանով օծրված, հարուստ, շատ լինելու նշանակությամբ)

-բար (չնի՝ «սէս, նման, իբրև» նշանակությամբ)

բ) Կազմածդ բառերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

42. Տրված բառերին կամ նրանց արմատներին ածանցներ ավելացնելով՝ կազմի՛ր հականիշ բառեր: Ածանցներն ընդգծի՛ր:

բառեր	հականիշներ	
	նախածանցավոր	վերջածանցավոր
Ննուշ՝ շնորհք	անշնորհք	շնորհալի
շուք		
օրենք		
վճար		
ավարտել		
փայլել		

43. ա) Կարդա՛ տեքստը, գծիկի տեղում ավելացրո՛ւ անհրաժեշտ ածանցը: Փակագծերում նշված է, թե ածանցը քանի՛ տառից է բաղկացած:

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզի ամենամեծ թատերա-
 սրահներից մեկում երաժշտ..... (4) միջազգ..... (3)
 մրց..... (3) էր: Մրցահարթ.....(2) էին դուրս գալիս
 հռչակ.....(4) երաժիշտներ: Թատրոնի շենքի առջև մեծ
 բազմ.....(5) էր կուրսակվել:

Գահիժնը լեւի-լեցուն էր հանդիսատեսներով: Վերջ.....(4)
 հասավ վաղուց սպասված պահը: Սկսվեց նվագը: (2)ծաւնթ,
 քայց քաղցրահնչ.....(3) մեղեդին անմիջ.....(4) գերեց
 լսողներին թով..... (2) հնչ.....ների (3) մեջ նրանք զգացին
 հեռ.....(4) երկրի լեռների վեհ.....ը (5), լեռն.....(4)
 խոխոջ.....(2) աղբյուրների ու քչքչ..... (2) գեպ.....ների (2)
 կարկաչ.....ը (3):

Բունն ծափահար.....ների (5) ներքո երաժիշտը
 հարթ..... (4) իջավ բեմից:

բ) Ի՞նչ ածանցներ գործածեցիր: Գրի՛ր դրանք (նույն
 ածանցը չկրկնես):


44. Յուրաքանչյուր շարքում ընդգծի՛ր այն բառը, որը
 կազմությամբ պարզ է:

- ա) խորանարդ, մարդ, արդիական, գնդերարդ
- բ) լեզվաբան, բանակ, բուսաբան, բանաստեղծ
- գ) կիսար, կռնար, մկրար, քնար
- դ) սպացուցել, սպակի, սպերախար, սպերջանիկ

47. Կազմիր բարդ բառեր՝ տրված արմատները գործածելով որպես վերջին բաղադրիչ:

- ա) տուն _____
- բ) սեր _____
- գ) ներմակ _____
- դ) պեղ _____
- ե) քաղաք _____
- զ) խանութ _____

48. ա) Ըստ գույների միացրո՛ւ հետևյալ արմատները և 8 բարդ բա՛ռ կազմիր:



բ) Ո՞ր բառի առաջին բաղադրիչում հնչյունափոխություն չկա: Գրիր:

49. Լրացրո՛ւ աղյուսակը՝ յուրաքանչյուր սյունակում գրելով 5-ական բառ:

<i>հոդակապով բարդություն</i>	<i>անհոդակապ բարդություն</i>

50. ա) Գրի՛ր բարդ բառեր, որոնց բաղադրիչները միացած են ու-ով:


Նմուշ՝ այբուբեն:

բ) Կազմածդ բառերից երկուսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

51. Անհոդակապ բարդություն կազմի՛ր՝ տրված բառերը գործածելով իբրև առաջին բաղադրիչ:

- բար* _____
- բառ* _____
- ակն* _____
- արև* _____
- կով* _____

52. ա) Բառերի այս փնջից ընտրի՛ր մույն գույնն ունեցող մեկական բառ և 8 անհոդակապ բարդություն կազմի՛ր:



բ) Ո՞ր բառերում հնչյունափոխություն կա: Այդ բառերն ընդգծի՛ր:

53. Տրված հարադրություններն արտահայտի՛ր մեկ բառով:

- ա) մոտ գալ
- բ) ոտքի ելնել
- գ) լաց լինել
- դ) ճանապարհ ընկնել
- ե) շուտ տալ

54. Փակագծերից հանելով՝ գրի՛ր անջատ, գծիկով կամ միասին:

- (Տեր) Պետրոսյան _____
- փարեց(փարի) _____
- հեռու(մուրիկ) _____
- հիևզ(հարկանի) _____
- իևևսուն(իևր) _____
- երեսուն(քառասուն) _____
- (մուգ) կարմիր _____
- կտուց(կտուցի) _____
- (բաց) կապույտ _____
- (հյուսիս) արևելյան _____

55. Տեքստի բաց թողնված մասերում մտքով հարմար բառե՛ր գրի՛ր: Դժվարանալու դեպքում դրանք ընտրի՛ր տեքստից հետո տրված բառերից:

..... թշնամին ներխուժեց մեր
 երկիր, սկսեց ավերել, սպանել, կողոպտել:
 իշխանը փակվեց իր ամրոցում
 և շփմագրավեց թշնամուն: Օհնականը մեկ-մեկակ դուրս եկավ
 թշնամու դեմ, կռվեց, բայց ի վերջո նահանջեց՝
 արյունաքամ լինելով:

Ասում են՝ աշխարհի բոլոր
 եղևնիներն աճել են հայրենիքի համար զոհված շինականի
 արյունից:


..... իշխանն էլ գնաց աշխարհից, բայց եղևնին
 սաքրում ու կանաչ է մնում հիևզ հարյուր փարի:

Հողը ամառ թե շմեռ կանաչ է պահում հայրենիքի համար
 զոհվածների հիշատակը:


Հայոց, մշտականաչ, քաջարար, անառիկ, արյունարբու,
 անխնա, փոքրոգի, վախկոտ, չքնադ:

56. Յուրաքանչյուր բառի դիմաց գրի՛ր համապատասխան համարաթիվը:


Խոհանոց




<input type="checkbox"/> արոռ	<input type="checkbox"/> լվացարան	<input type="checkbox"/> ջեռոց
<input type="checkbox"/> անշեռոցիկ	<input type="checkbox"/> լուցկի	<input type="checkbox"/> սառնարան
<input type="checkbox"/> բացիչ	<input type="checkbox"/> խոզանակ	<input type="checkbox"/> սառցարան
<input type="checkbox"/> գազօջախ	<input type="checkbox"/> ծորակ	<input type="checkbox"/> սկուրեղ
<input type="checkbox"/> գրքնակ	<input type="checkbox"/> կաթաս	<input type="checkbox"/> սրբիչ
<input type="checkbox"/> դարակ	<input type="checkbox"/> կեռիկ	<input type="checkbox"/> սրնաման
<input type="checkbox"/> թաս	<input type="checkbox"/> ճաշասեղան	<input type="checkbox"/> սփռոց
<input type="checkbox"/> թավա	<input type="checkbox"/> շերեփ	<input type="checkbox"/> փլավքամիչ
<input type="checkbox"/> թեյնիկ	<input type="checkbox"/> շիշ	<input type="checkbox"/> քերիչ
<input type="checkbox"/> ինքնատեռ	<input type="checkbox"/> պարփ պահարան	<input type="checkbox"/> օդափոխիչ

 **57.** Ո՞ր շարքի բառերում են բոլոր բաղադրիչները գծիկով գրվում:

- (գյուղե)գյուղ, (ի)հարկե, (կաս)կարմիր
- թև(թիկունք), կոհակ(կոհակ), (ճեփ)ճերմակ
- գրական(գեղարվեստական), գալ(գնալ), (վառ)դեղին



 **58.** Ո՞ր շարքի բառերում են բոլոր բաղադրիչները միասին գրվում:

- հիսուն(մեկ), ի(գուր), (կարմիր)կարմիր
- (թիկունք)դարչնեյ, ալիք(ալիք), ծիլ(ու)ծաղիկ
- (ամենա)բարդ, յոթանասուն(յոթ), (դռնե)դուռ

 **59.** Ո՞ր շարքի բառերում են բոլոր բաղադրիչներն անջատ գրվում:

- (բաց)մանուշակագույն, ի(շահ), անթիվ(անհամար)
- (բաց)անեյ, ժամանակ(առ)ժամանակ, շոքս(միլիոն)
- դաշտ(ու)այգի, (ի)սրբե, գիշեր(ցերեկ)

60. Բառարան բառի դիմաց ինչպիսի՞ հարցին պատասխանող բառե՛ր գրիր:



61. Բացի՛ր հետևյալ հապավումները:

գինկոն _____

գիտաշխատող _____

շինիրապարակ _____

բնակվարչ _____

բուժօգնություն _____

աշխույժ _____

62. Համառոտագրի՛ր հետևյալ բառերը և բառակապակցությունները:


Թվական _____, թվականներ _____, հայրոր _____, մետր _____,

ասնորհմետր _____, լիտր _____, գյուղ _____, քաղաք _____,

բնկեր _____, սուրբ _____, Զրիստոսից առաջ _____,

Զրիստոսից հետո _____:

63. ա) Բառակապակցություններից կազմի՛ր մասային և բառային հապավումներ և լրացրո՛ւ խաչբառը:



- | | |
|-----------------------|---------------------------|
| 1. ծնողական կոնֆլիկտ | 2. քիմիական մաքրում |
| 3. գիտական աշխարհող | 4. բուժական կետ |
| 5. դասարանի ղեկավար | 6. ուսումնական մասի վարիչ |
| 7. գինվորական ղեկավար | 8. ուսումնական փարի |
| 9. շինարարական ջոկար | |

բ) Կազմածդ հապավումներից երեքը գործածի՛ր նախադասությունների մեջ:

 **64.** Անուններն ամբողջական գրիր: Նշի՛ր, թե նրանք ուլքե՛ր են:


ա) Ավ. Բասիակյան _____


բ) Ալ. Թամանյան _____

գ) Մ. Սարյան _____

դ) Հովհ. Բաղրամյան _____

ե) Սյր. Չորյան _____



 **65.** Զո որևէ դասագրքից արտագրի՛ր երկու նախադասություն, որոնցում կա՝

ա) համառոտագրված անշնանուն

բ) համառոտագրված շափման միավոր

66. Լեզուների անունների համառոտագրությունները գրի՛ր ամբողջական բառերով:

անգլ. _____	գերմ. _____
իսպ. _____	պարսկ. _____
ռուս. _____	ֆրանս. _____

67. Սլաքներով իրա՛ր միացրու հեղինակի և ստեղծագործության անունները:

Հովհ. Թումանյան	Մասունցի Դավթի արշանը Երևանում
Ա. Խաչատրյան	«Պեպո»
Ե. Բոշար	«Մի կաթիլ մեղրը»
Վ. Անանյան	Օպերային թատրոնի շենքը Երևանում
Հ. Բեկնազարյան	«Սևանի սփին»
Ալ. Թամանյան	«Սուտերով պարը»

68. Կարդա՛, ենթակայաներն ընդգծի՛ր մեկ գծով, ստորգլխալները՝ երկու գծով:

Մայր հողն իր երեք որդիներին ուղարկեց, որ շրջեն աշխարհում և իր համար նվեր բերեն:*



Հրաբուսը արեգակն իր շողերը սփռեց ոսկեծուրի արքերի վրա, համբուրեց լեռների երկնահույ կալարներն ու մնաց երկնքում: Անչրևը գրույցի բռնվեց թափանցիկ ամպերի հետ: Անհամբեր քամին որոշեց թափառել: Նա աղբյուրից ջուր խմեց, շոյեց գույնզգույն ծաղիկներին և շրապ հասալ քաղաք: Թակեց դարպասներն ու դռները, սրբեց փողոցների փոշին: Հեյրո մրսավ դարբնոց և սկսեց խաղալ կրակի հետ:

Երեք գավակներն էլ մոռացան մոր պարպերը:

Մայրը նեղսրտեց անհնազանդ որդիներից: Նա կամեցավ, որ մարդիկ հավերժ դժգոհեն արևից, անչրևից, քամուց:



69. ա) Գտի՛ր հոմանիշների զույգերը և գրի՛ր դեմ դիմաց: Ո՞ր բայն է «կորցրել» իր հոմանիշը: Գրի՛ր դատարկ շրջանակի մեջ:

<input type="text" value="աղերսել"/>	<input type="text" value="վառել"/>	<input type="text" value="սոսքել"/>	<input type="text" value="խնդրել"/>
<input type="text" value="հնայել"/>	<input type="text" value="հասիշտակել"/>	<input type="text" value="հրասպուրել"/>	<input type="text" value="այրել"/>
<input type="text" value="երկյուղել"/>	<input type="text" value="բարկանալ"/>	<input type="text" value=""/>	<input type="text" value="սարսափել"/>
<input type="text" value="փառաբանել"/>	<input type="text" value="ուղարկել"/>	<input type="text" value="ստեղծել"/>	<input type="text" value="զայրանալ"/>
	<input type="text" value="հեկեկալ"/>	<input type="text" value="արտասպել"/>	

բ) Հոմանիշների մեկ զո՛ւյգ ընտրի՛ր և գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:

գ) Կազմածդ նախադասությունների մեջ այդ բայերն ի՞նչ են: Համապատասխան շրջանակը ներկի՛ր:

- 1-ին նախադասության մեջ՝ ստորոգյալ լրացում
- 2-րդ նախադասության մեջ՝ ստորոգյալ լրացում

70. Կարմիր գրված բառերի կողքին՝ փակագծերում գրի՛ր, թե ի՞նչ հարց է ստանում նախադասության այդ անդամը:

Երիտասարդը (.....) խորհուրդով կաժանովիջավ (.....) կիրճը: Նրա առջև անսպասելիորեն բացվեց բարձունքից շառաշյունով գահավիժող ջրվեժը (.....): Քարից քար ցայկուրեց ու մոլորեցավ փրփրաբաշ (.....) սահանքին (.....): Ջրի (.....) նուրբ (.....) ցողը պարուրեց (.....) նրան: Չէր էլ զգում, որ թրջվում է (.....): Նրան հանույք էին պարնառում ջրի սառը ցայտերը (.....), զովաշունչ աղամանդափայլը (.....): Օդի մեջ (.....) դրանք երկնավառ ծիածան էին կազմում:

Վեր նայեց: Քարափների գլխին աճել էր սաղարթափիփ մի ընկուզենի (.....), որ ասես հապճեպ նկարված լիներ երկնքի կապույտին: Երիտասարդը անէացած (.....) հիանում էր բնության գեղեցկությամբ (.....):

71. ա) Հոմանիշները լրացրո՛ւ բառացանցի մեջ (դրանք ընտրի՛ր տրվածներից): Կարմիր վանդակներում կկարդաս «կերուխում, ճաշկերույթ» բառի հոմանիշը:

1. հանդիմանել
2. աշխատասեր
3. բարև
4. խավար
5. առկայծել
6. գահաժառանգ

1							
2							
3							
4							
5							
6							

կայծկլրալ ողջույն	նախադե արքայազն	ջանասեր մթութուն
----------------------	--------------------	---------------------

բ) Նախադասություն կազմի՛ր՝ բառացանցի բառերից մեկը դարձնելով ենթակա:

72. Մեկ անգամ կարդա՛, այնուհետև բաց թողնված տեղերում լրացո՛ւմ ավելացրու:


Ծովի այիքները մեղմ համբուրում էին
 կղզու ասիերն ու
 հետ վազում: այս կղզին վերևից
 նայողին ասիտե էր հիշեցնում: Չորս կողմը
 ջուր էր: Ծովն իր խոնավությունը մշտապես դալար էր պահում
 կղզու բույսերը: բլրից
 փարածվում էր հասմիկների
 բուրմունքը: Ժայռի ծերպերին անած
 թզենիներն ու մաս-
 րենիները նայում էին վեր, կլանում
 արևի փաթությունը: Իսկ քիչ այն կողմ
 կիպարիսները խաղում էին ամպերի հետ:

73. Նայի՛ր այս լուսանկարներին և բազմակի անդամներով մեկական նախադասություն գրի՛ր:









74. Կարդա՛, ալիքաճև ընդգծի՛ր նախադասության բազմակի անդամները:

Հայկական բնաշխարհի զարդերից է այծյամը: Այն արագավազ, շքնադ, փոքր կենդանի է: Մարմինը համեմատաբար կարճ է, վիզը՝ երկար: Այծյամն ունի փոքր գլուխ, ամուր կնդակներով երկար ոտքեր:



Այծյամի գեղեցիկ մորթին ամռանը շիկակարմիր է, շմռանը գորշ է դառնում:

Այս կենդանին սպրում է հիմնականում անտառներում: Սնվում է միայն խոտաբույսերով, վայրի պտուղներով ու հատապտուղներով, փերեներով: Անտառը նրա արտափայլուն ու թաքստոցն է: Այծյամը սիրում է նաև գետափնյա եղեգնուրներն ու անտառի բացարևները:

Ամռանը առավոտյան, երեկոյան և գիշերը այծյամներն արածում են: Ցերեկվա շոգին թաքնվում են սրվերում և հանգստանում: Ցուրտ եղանակին կեր են հայթայթում օրվա բոլոր ժամերին: Առատ չյան ժամանակ այծյամները երբեմն ելնում են նաևապարհները:

75. Ընդգծի՛ր մակդիրները: Ո՞ր մակդիրն է առանձնահատուկ, ինչո՞վ:

Տապալված սյուներ, որմեր հողմածեծ
Ու քանդակագարդ քեկորներ քարի,
Որ հրաշագործ նախշերում իրենց
Դեռ պահպանում են շունչը հաննարի:

Վահագն Դավթյան



76. Ճի՞շտ է արդյոք հետևյալ միտքը: Ընտրածդ պատասխանի շրջանակը ներկի՛ր:

Մակդիրներ գործածվում են միայն բանասարկություններում:

○ այո

○ ոչ

77. ա) Ընդգծի՛ր տեքստի մակդիրները:

Հինավուրց անբառը աստիճանաբար փոխվում էր: Ոսկեգոծ արեգակը հմուտ նկարչի պես գունավորում էր ծառերը: Գեղնակարմիր անբառը մեղմորեն նսգում էր քնքշորոք գեփյուրից: Անբառը կախարդական գույների փոնավաճառ էր հիշեցնում:

Անբառի անդորրը խախտվեց: Հողմակոծ քամին մուրակա ոսկեծուփ դաշտերից ներխուժեց անբառ: Նրա սուլոցը խլացրեց կարկաչահոս առվակի հոգեպարար երգը: Գունազեղ տերևները, օդում պտտվելով, ավարտեցին իրենց վերջին պարը:

բ) Մակդիրներից ո՞րը կփոխեիր: Գրի՛ր տեքստի մակդիրով բառակապակցությունները և քո տարբերակները:

Նմուշ՝ ակեծուփ ծով – փոթորկահույզ ծով:

գ) Եթե տեքստում կարող ես մակդիր ավելացնել, գրի՛ր առաջարկածդ բառակապակցությունները:

 **78.** ա) Հետևյալ բառերին մակդիրներ ավելացրու:


_____ *սիրտ*

_____ *գարուն*

_____ *ծառ*

_____ *սիրտ*

բ) Կազմածդ կապակցություններից երկուսը գործածիր նախադասությունների մեջ:

 **79.** ա) Ընդգծիր համեմատությունը:

Դու էլ գետի պես անցիր քո նամիսն,


Եվ նման եղիր գետի հորչանքին,

Որ կյանքիդ վերջին կայանում անգամ

Ինչ-որ մի բանով պարք լինես կյանքին:

Հ. Սահյան

բ) Գտածդ համեմատությունն օգտագործիր նախադասության մեջ:

 **80.** Ճի՞շտ է արդյոք հետևյալ միտքը: Ներկիր ընտրածդ պատասխանի շրջանակը:

Համեմատություններ գործածվում են ինչպես գեղարվեստական սրեղծագործություններում, այնպես էլ առօրյա խոսքում:

այո

ոչ

81. Ովքե՞ր են բանաստեղծական հետևյալ տողերի հեղինակները: Ճիշտ պատասխանի շրջանակը ներկի՛ր:



ա) Չեմ դավանանքի իմ Նվարդին,
Որքան էլ դյուրես, օ՛, Շամիրա՛մ:

Վ. Տերյան Ն. Չարյան Հ. Մահյան

բ) Հիշում եմ դեմքը քո ծեր, մա՛յր իմ ականջ ու ականջին,
Լույս խորշումներ ու գծեր, մա՛յր իմ ականջ ու ականջին:

Ավ. Իսահակյան Ե. Չարեանց Վ. Տերյան

գ) Մայրս փոքրիկ, մայրս խեղճ,
Մայրս մի մայր հասարակ,
Մայրս այս մայր երկրի մեջ
Արևի դեմ մի ճրագ:

Ս. Կապույրիկյան Հ. Ծիրագ Պ. Սևակ

82. Նախորդ առաջադրանքի նման մեկն էլ դո՛ւ կազմիր՝ օգտագործելով քո դասագրքի բանաստեղծությունները: Տո՛ւր, թող դասընկերդ լուծի:

83. Ի՞նչը կարող է լինել՝

արևի պես ջերմ _____

քարի պես ամուր _____

վարդի պես կարմիր _____


սաքի պես սև _____

84. Արեգակը ժայտաց ծովափի ավազին պատկած մանուկներին նախադասության մեջ փոխաբերություն կա՞:

այո

ոչ

85. ա) Հայաստանի քարտեզի վրա լրացրո՛ւ հետևյալ անունները՝ Երևան, Արագած, Արարս, Սուրբ Էջմիածին, Սևանա լիճ, Արցախ:



բ) Քո բնակավայրի անունը և քեզ ծանոթ տեղանուններն ինքդ գրի՛ր քարտեզի վրա: Խորհրդակցի՛ր մեծերի և ընկերներիդ հետ:

ՄԱՅՐԵՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐ 2

6-րդ դասարան

Հեղինակ՝

Դավիթ Գյուրջինյան

Համակարգչային ձևավորումը՝

Ն. Գևորգյանի

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:

Տպագրությունը՝ օֆսեթ:



ԷԴԻՏ ՊՐԻՆՏ

Երևան, Թումանյան 12
Ֆոն.՝ (374 10) 520 648
www.editprint.am
info@editprint.am

Երևան 2013

Աշխատանքային տետրի նկատմամբ բոլոր իրավունքները գտնվում են հրատարակչության պահպանության ներքո: Սույն հրատարակությունը չի կարող վերահրատարակվել կամ բազմացվել այլ եղանակներով, առանց հրատարակչության և հեղինակի գրավոր համաձայնության: